# Առողջության ապահովագրության շուկայի համար առանցքային ամսաթվերը

Նախապատրաստվե՛ք նախքան Ծրագրում ընդգրկվելու ազատ ժամանակաշրջանի մեկնարկը. նշե՛ք առանցքային ամսաթվերը Ձեր օրացույցի վրա և հետևե՛ք ստորև ներկայացված հնարքներին.

## 5 առանցքային ամսաթվեր

- **2016 թվականի նոյեմբերի 1՝** մեկնարկում է 2017 թվականի համար Ծրագրում ընդգրկվելու ազատ ժամանակաշրջանը:
- **2016 թվականի դեկտեմբերի 15՝** եթե ցանկանում եք փոխել պլանները, գործե՛ք մինչև դեկտեմբերի 15-ը, որպեսզի Ձեր նոր ապահովագրական ծածկույթը մեկնարկի հունվարի 1-ից:
- **2016 թվականի դեկտեմբերի 31՝** ապահովագրական ծածկույթն ավարտվում է Ապահովագրական շուկայի՝ 2016 թվականի ապահովագրական պլանների համար:
- **2017 թվականի հունվարի 1՝** ապահովագրական ծածկույթը կարող է մեկնարկել Ապահովագրական շուկայի՝ 2017 թվականի ապահովագրական պլանների համար:
- **2017 թվականի հունվարի 31՝** ավարտվում է Ծրագրում ընդգրկվելու ազատ ժամանակաշրջանը:

## Այցելե՛ք Healthcare.gov կայք

- Բաժանորդագրվե՛ք ամենաթարմ նորություններն ու կարևոր ամսաթվերի մասին հիշեցումներ պարունակող էլեկտրոնային նամակներ կամ տեքստային հաղորդագրություններ ստանալու համար:
- Եթե Դուք ներկայումս ունեք Ապահովագրական շուկայով առաջարկվող ապահովագրական ծածկույթ, վերանայե՛ք Ձեր դիմումը **HealthCare.gov** կայքում՝ այն թարմացնելու և Ձեր կյանքում տեղի ունեցած փոփոխությունների մասին նշելու համար:
- Եթե Դուք ներկայումս չունեք Ապահովագրական շուկայով առաջարկվող ապահովագրական ծածկույթ, ստեղծե՛ք հաշիվ և պարզե՛ք, թե ինչ ապահովագրական ծածկույթից կամ ծախսերի հետ կապված օգնությունից եք Դուք իրավասու օգտվել:
- Դիմե՛ք առողջության ապահովագրական ծածկույթի համար և ընդգրկվե՛ք ծրագրում:

Health Insurance Marketplace

CMS Product No.11660-Armenian
Revised July 2016